Եւ առաւօտուն (23 Սեպտ.) գնացաք ի ժամ, եւ կանգնեալ էին Ե Զ ոգի համախոհիւք իրիցանիքն և զեկողսն ի ժամ յետ դարձուցանէին, որք միամիտ ժողովուրդք էին և որք գիտէին զնոսա և զեղեալն ո՛ր սակի գային յեկեղեցի, և բազումք գայթակղէին տեսանելով զեղեալ իրս, զի ընդ մեր յեկեղեցի ոչ մտին, այլ այնպէս կանգնեալ ի դուռն եւ զայն առ-նէին և ասէին վասն մեր եթէ Բանադրեալք են նո-քա, մի՛ երթիցէք։ Եւ մեք կանգնեալ՝ Տէր Յովանէս, Տէր Մարտիրոս, Տէր Յակոբ, Տէր Մարտիրոս, Տէր Աստուածատուր փոքր, Տէր Մարկոս և Տէր Աստուա-ծատուր եպիսկոպոսն և այլ Բ մուսաֆիր քահանայք, արարաք լի ուրախութեամբ զժամն ընդ ամենայն ժո-ղովրդովք ի փառս Աստուծոյ։ Եւ յետ ժամուն ժո-ղովեցան ծերակոյտք և ընտիր քրիստոնեայք՝ մահ-տեսիք և տեղացիք Լ ոգի նստեալ և Լ Ա ևս կանգ-նեալ նշանաւորք, կարդացին զգրեալ թուղթն և հա-ւանեցան ամենեքեան. եւ եդին աթոռակալ զՀաճի Աբտուլան տեղացի, ընդ նմին և զՄուղսի Պողոսն՝ երեցփոխան, զՍատէթ պալին, ընդ նմին և զՅոճա Վարդանն. այսպէս և զայլսն, և հաւանեցան. և ե-պիսկոպոսն կանգնեալ օրհնեաց և Հայր մեր ասին։ Եւ նոր մօհր արին իւրեանց և Թըլթըլ Ասվատուրէն ուղեցին զառաջինն և ոչ ետ մինչ յերեքշաբթիս (25 Սեպտ.)։ Եւ գնացաք մօտ Առաջնորդն, և նստեալ էին Ղալֆան, Թըլթըլն և Պարմախսուզն. և Ղալֆան ի մէջ արկեալ թէ Մղտեսին արդար էր ի մէջ մեր, նայ յիմ վերայ զուր է ասեր. բերէ՛ք ատեան թէ երդուի զխօսքն յինէն լսելոյն։ Եւ Մղտեսին ասաց. Ցէ՞ր կու կանչես, ես քեզ դատախազ չեմ, ա՛յլ բանի համար եմք եկեր մեք ի տեղս։ Եւ սկսաւ պառաչել և կան-չել. Ես զայս քեզի չեմ թողուր, ե՛կ երդվիր։ Եւ բերել ետ զԱւետարանն եւ առեալ ի ձեռաց երիցուն՝